

1843 ԲԱԶՄԱՎԵՊ 1909

* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ *

ՀԱՏՈՐ
ԿԵ
ՅՈՒՆԻՍ
Թ. 6

ԱՇԽԱՏԻ - ԱՌԱՋԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ

Ա Ա Կ Ե Խ Ա Վ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ա Ր Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Պրոֆ. Լեմանի « Նիւթեր Հայաստանի հնագոյն պատմութեան » գրոծը թազմավէպի մէջ թարգմանած միջոց խօսք տուած էնքնը թարգմանաբար ծանօթացնել հաւ Հայաստանի մէջ զանուած արարացի այն արձանագրութիւննեղը, որոնց յիշեալ զըրգին ետեր կցուած են: Անոնց հաւացուած են շատ զանազան ժամանակներու մէջ զանազան անձանց ձեռքով: Սակայն անոնց ընթերցողը, թարգմանողը և լուսարանողն է Տոկու. Մաքա ֆան Բերչեմ: Պիտի ջանանը զլիաւորապէս պատմական լուսարանութիւնները հու ընծայել, իսկ տարակուական և միայն մասնագիտաց անձուկ ըշջան մը հետաքրքրող կտորները զանց ընել, բնագիրը ցոյց տալով:

Արարական տիրապետութիւնը Հայաստանի վրայ մեր երկրի պատմութեան ամենէն աւելի արիւնոտ էջերը կը ներկայացնէ, այնու հանգերծ այն շղագրիր մեզի համար հետաքրքրական ըլլալէ. վասն զի թէկ Արարաք ընդհանրապէս իբր վայրի գաղաններ միայն արիւնով կը յագենինէ, սակայն թափուած արիւնը հայ

էր և Հայու երակներէն կը հոսէր: Անոնց հետեր կը գտնուին խարբերդի, Բարերդի, և Ֆարերին կամ Մուփարերին (Նվեր-կերտ) մէջ: Մենք կը սկսինք վերջնովով, որ Լեմանի թելքի և Մոլաքէի հետազոտութեանց և կարծեաց համեմատ հին Ծիգրանակերտի հիմունքներուն վրայ շինուած է՝ և այժմ պաշտօնապէս տաճկերէն Արմեվան կը կոչուի:

Ա. Արծանագրութիւնք Մուֆարքինի
(Նվիրկերտ)

1. Գերեզմանացարի մը վրայ բափի տառերով կայ « Ասիկայ է տապան Հուսէյնի, որդույ թարայ. Ասոււծոյ ողորմութիւնը իրեն վրայ ըլլայ »:

Հաւանականաբար Հէճիրի Գ գարէն (Թգար յ.թ.):

Արծանագիր Մերկանեան Ապու Մահառու Սահիթի, յամին 391 Հ. (1001 յ.թ.):

2. Խալամական ժամանակը շինուած պարապին հիւսիս-արևելակողմի աշտարակի մը վրայ.

1. Համեստ Ամսորեայ 1900 նոյ. և 1907 Յունիկար:

«Բաց ի ալլահէն ուրիշ Աստուած չկայ. Մուհամմէտ անոր առաջեալն է: Այս շինութիւնը հրամայեց շինել յաղթողն Էմիր Մուհամմէտ ալ-տաւալա Ապու Մանսուր, հովանաւորեալը հաւատացելոց իշխանին. ալլահ իւր կեանքը երկարէ. յամի 391 ինքն տուաւ ծախցերը իւր ընդարձակ հարստութենէն, փափացելով գէմքին Աստուածոյ հօրի, գերազունի»:

Մերվանեաններու սակաւածանօթ պատմութիւնը լուսարանելու համար ջատ կարեոր է արձանագիրս: Մուհամմէտ ալ-տաւալա Ապու Մանսուր Սահտ էր որդի Մարվանի և եղբայր Ապու Ալի Հասանի, որ 380 ին (991 յ. թ.) ի վեր Հիշն-Քայֆայի, Ամրոյ և Մուփարքնի վրայ կ'իշխէր: Երբ սա Ամրոյ մէջ 386ին (==996) սպանուեցաւ, Մուհամմէտ բռնացաւ Մուփարքին մէջ, իւր եղբայրը սպաննողին թողով Ամրոյ իշխանութիւնը: Ինըն սպանուեցաւ 401ին (==1011) սպայի մը ձեռքով: Ուրեմն 1001ին քաղաքին պարփակները ամրացնցած է, ինցքինքը թերեւս Համսուացիներու դէմ պաշտպանելու համար:

3. Արձանագիր Մերվանեան Ապու Նասր Ահմատի, յամին 416 Հ. (1026): Քաղաքի հիւսիսային կողմի պարսպին վրայ.

«Բաց ի ալլահէն ուրիշ Աստուած չկայ. Մուհամմէտ անոր առացեալն է. Աստուած օրհնէ զինքը: Այս.... շինութիւնը հրամայեց Էմիրը, բարձր տէր, Նասր ալ-տաւալա, ընտրութիւն կրօնի՞.... թող երկար տէէ իւր իշխանութիւնը: Եւ կատարուեցաւ այս շինութիւնը (առաջնորդութեամբ?) Ապու... ալ Հասան դատաւորին, որդույ Մուհամմէտի... յամի 416»:

Դժբաղդաբար արծանագիրս քիչ մը վասուած է. սակայն զլխաւոր բանը, որ է թուական և անուն, մնացած են մասամբ: Նասր ալ-տաւալա անունն ուրիշ մէկը չէ եթէ ոչ Մերվանեան Նասր ալ-տաւալա Ապու Նասր Ահմատ, եղբայր վերոյիշեալ Ապու Մանսուրի, որ սորա 401ին (==1011) սպանմանէն վերջ տիրեց բռվանդակ Ցիար-պարը երկրին վրայ, և իւր իշխանութիւնը ժամանակ մը արեւել-

քէն մինչեւ ձագիրա՝ իսկ արևմոբքէն մինչեւ Արքա կը տարածուէր, մինչեւ որ 453ին (==1060) գրեթէ 80 տարեկան վախճանեցաւ: Իւր երկար կառավարութեան ժամանակ արուեստներ և զիտութիւններ ծաղկեցան և իւր հպատակները մեծ բարօրութեան մէջ կ'ապրէին: Բազմաթիւ շինութեանցը մէջ կը յշշուին նաև քաղաքի շրջապարսպին նորոգութիւնն և յաւելուածն:

4. Երբ 1766ին Նիբուհր Ամրդ քաղաքը այցելեց, երեք հատ Մերվանեանց վերարերող արձանագրութիւններ գտաւ պարսպաց վրայ՝ որոց երկուքը կը վերաբերին նախորդ Ապու Նասր Ահմատի: Յետագայ երեք թիւերն ուրեմն Նիբուհրէն օրինակուածներն են, որոնց ցարդ թարգմանուած եւ լոյս տեսած չէին: Ահաւասիկ անոնց առաջինը.

«Ասիկայ է ինչ որ հրամայեց ընել, շինել և իւր ստացուածքէն ծախսել մելտէրն Էմիր, բարձր տէրն, յաղթողն, զօրութիւնն իսլամի, Սատ ալ-տին ալ-տաւալա, նիզակածիգն կրօնը, պատիւն ժողովրդեան, պարծանը Էմիրաց, Ապու Նասր Ահմատ, որդի Մերվանի. աստուած երկարէ իւր կեանքը և իւր իշխանութիւնը: Այս շինուեցաւ Ապու Ալի Հասան դատաւորի ձեռքով, որդի Ալիի, որդոյ Ահմատի, Ամրդ քաղաքէն, յամի 444 (==1053):»

5. Նմանապէս Ապու Նասր Ահմատի կը վերաբերի հետեւեալն.

«Ասիկայ է, ինչ որ հրամայեց ընել, շինել և իւր ստացուածքէն ծախսել, ալլահի վարձատրութեան փափագելով և անոր շնորհըն ընդունելու համար, մեր տէրն Էմիր, բարձր տէրն, յաղթող, զօրութիւն իսլամի, Սատ ալ-տին ալ-տաւալա, նիզակածիգն կրօնը, պատիւն ժողովրդեան, պարծանը Էմիրաց, Ապու Նասր Ահմատ, որդի Մարվանի: Իւր որդի Էմիր Սատ ալ-տաւալա Ապու Հասան Մուհամմատի հսկողութեամբ (հրամայեց շինել). ալլահ երկնցնէ երկուքին ալ կեանքը և հզօրացնէ երկուքին թագաւորութիւնը: Այս

շինուեցաւ Ապու Ալի Հասան զատաւորի ձեռքով, որդի Ալիի, որդույ Ահմատի, Ամիր քաղաքէն, յամի 437 (1046):

Այս տեղ յիշուած էմիր Սատ ալ-տաւլա Ապու Հասան Մուհամմատ, որդի Ահմարին, կը թուի թէ մինչև հիմայ անծանօթ մացած անձ մ'է: Քանի որ իւր հօր իշխանակից կը ներկայանայ, անհաւանական չէ ընդունիլը թէ նա որ և է կերպով մը մասնակցած է իշխանութեան և թերևս Ամիրի քաղաքագետ էր:

Երբ Ահմար 453ին (1060) մեռաւ, անոր ուրիշ երկու որդիները գրաւեցին իշխանութիւնը, որ է Նասր թագաւորեց Թարբէնի մէջ, իսկ Սայտ առաւ Ամիրը, ուր արդէն 455ին (1063) սպանուեցաւ: Այս սպանութենէն վերջը նաև Ամդոյ վրայ Նասրի իշխելը կը հաստատուի յաշորդ Նիբուլբեան երրորդ արձանագրութեամբ:

6. «Այս է, ինչ որ հրամայեց ընել իմիր, բարձր տէր, նիզամ ալ-տին Մուայիխա, ալ-տաւլա, պարծանց ժողովը գեղեան, զօրութիւն Էմիրաց, Ապու Քաղիմ Նասր, որդի զօրութեան իւլամի, ալլահ ամրացնէ իւր թագաւորութիւնը և հզօրացընէ իւր յաղթութիւնը: Զենոք դատաւոր Ապու Հասան Ապու ալ-Վահիտի, որդույ Մուհամմատի, յամի 460 (1068):»

Ուրեմն շինողն առանց տարակուսի է Ահմատի որդին և յաշորդը նիզամ ալ-տին Ապու Քաղիմ Նասր, որ Սահիտի մահուանէն վերջ միայն թագաւորեց և 472ին (1079) մեռաւ:

7. Արձանագիր Այսուկեան Մալիք Աշրաֆ Մուսայի, յամին 607-615 (1211-1219): - Բաց ի քաղաքին հիւսիսակողմը գտնուող վեցանկիւնեան աշտարակին արձանագրութիւնէն, որ աւրուած ըլլալով շատ յստակ չէ և ընթերցումն անապահով, կայ հիւսիսակողմի հին պարսպին դրան վրայ Այսուկեաններէն մացած երեքտողիան հետեւեալ պահաւաոր արձանագրութիւնը.

«(Հրամայեց շինել կամ նորոգել այս?) նոր և երջանկարեր գուոր, որ յառաջ Պապ

ալ-մարա (Դուռ կանանց) կը կոչուէր իսկ այժմ Պապ ալ-ֆարանի (Դուռ զեղեցիկ տեսարանի), մեր տէրը Սուլդան Մալիք Աշրաֆ, իմաստում, արդար, որուն ալլահ օգնած է, յաղթող, ... (տէր կամ Սուլդան) Արարաց և Պարսից, Թագաւոր Հայոց, Ապու Քաթի Մուսա, որդի մեր Մալիք Աղիլ Ապու Պապը Մուհամմատ Սուլդանին, որդույ Այսուպայ, որ է օգնական հաւատացելոց իշխանին: ալլահ երկուցին ալ յաղթութիւն շնորհէ: (Այս կատարուեցաւ ձեռօց?) Ապու Սահիտ Ալթունպայի և նշանաւոր քարոզիչ Շամս ալ-տին Ապու մատի Մուփատաւաի, որդույ Ճափարի, որդույ Շահի(?), և ինամօք բարձր և պատուել ուխտած Սապիր ալ-տինի, որ է վատահութիւն իւլամի(?)...»

Ուրեմն դուռը նորոգողն և արձանագրութիւնը շինողն է Սուլդան Մալիք Աշրաֆ Մուլափափար ալ-տին Մուսա, որդի մը և յաշորդ Մալիք Ատիլի Մոփարբինի մէջ, որ հոս, ինչպէս նոյն ժամանակի Այսուպեանց մեծամասնութիւնը, Սուլդան ափազուը կը կրէ: Հետաքրքրական է Թագաւոր Հայոց կոչումը, զոր Խալաթայ՝ մէջ տիրող ազգաբէները կը կրէն, և արդէն Մալիք Ահմատ Այսուպ կրած էր և հաւանականարար անսիջապէս իւր մահուանէն վերջ զայն առած է իւր եղբայրը Մուսա և զործածած է զայն Միջազետաց և Հայոց վրայ ունեցած տիրապետութեան բռվանդակ ժամանակին մէջ:

Այս արձանագրութիւնէն քչիկ մը վերէ, մինոյն զրան վրայ կը գտնուի հրաբարտափի բեկոր մը փորագրուած:

«... Ներկ, աղ, պանիր, ցորեն ուսելիք, ... բամբակ, շուշմայ, ոչխար և ջորի, ըմպելի, ազնիւ ուսելիներ...»

Ինչ որ կը տեսնուի հոս խօսքը կամ հարկի վրայ է և կամ բաժի, որ յիշեալ

1. Խլաբ 579ին (1183) պաշտուեցաւ Սալահինքն, յետոյ 589ին (1193) Պաթիր ալ-մար Ամարէն, 604ին (1201) Այսուպէն և 607ին (1211) առնեցաւ Մուսային: «Թագաւոր Հայոց» միանոց կը կրէն Այսուպ և Մուսա նաև իրենց դրաց վրայ: անս Saint Martin. Armentrie I, 431; Castiglioni, Monete 203; Frasseti, Recensio 627 և այլն:

Նիւթերէն պիտի առնուէին երբ այս զոնէն
ներս մոնէին, Այսպիսի հրովարտակներ
մանաւանդ Ասորուց և Միջագետաց մէջ
շատ կը գտնուին:

Բ. Խարբերդ

8. Խարբերդէն մէկ արձանագրութիւն
մը միայն ունինք, Գարա Արսլանէն,
մզկիթի բակին մէջ գտնուած, թուականն
է 561 (1166).

«Ասիկայ է, ինչ որ հրամայեց շինել,
ալլահին մերձենալու և անոր բարիքները
ընդունելու համար, Էմիրը, մեծ և քաջ
առաջնորդ բանակաց, տէր, արզար, որուն
ալլահ օգնած է և յաղթութիւն է տուած,
պատերազմող, իմաստուն, ֆախը ալ-դին՝
գեղեցկութիւն իշլամին, պահապան իմա-
մի, օգնական մարդկութեան... նեցուկ տէ-
րութեան, փառը կրօնից, պսակ ժողովր-
դեան, արեգակն թագաւորաց, զօրութիւն
Սուլդանաց, մուալիմի բանակաց ազնուա-
կանութիւն, օգնական պատերազմուաց,
սպաննող անհաւասից և բազմատուածոց,
սուր Խալիֆայութեան, տէր Էմիրաց, Ա-
պու Հարիթ Գարա-Արսլան, որդի Տա-
ւուտի, որդույ Սուրմանի, որդույ Ուրաու-
զի, օգնական հաւատացելոց իշխանին, ալ-
լահ թող երկարէ իւր իշխանութիւնը, վասն
զի նա է պսակ և... ալլահ անիծէ ով
որ...իւր այս գրուեցաւ յամի 561(1166):»

Այս Գարա Արսլանը, որ Հիշն-Փայֆայի
մէջ տիրող Օրտոքիտեան հարստութեան
չորրորդ անձն է, ծանօթ է իրեւ բարե-
կամ և զաշնակից նուր ալ-տին Մահմուտ
երկելի աթարէկին, և յաջորդեց իւր հօր
Տաւուտին յամի 543 (1147) կամ թերեւ
բանի մը տարի աւելի առաջ. իսկ մահուան

տարին աղրիքներէն ոմանք 562 (1166)
և ոմանք 570 (1174) կը գնեն:
Թէ Խարբերդ այդ ժամանակ Քայֆայի
Օրտոքիտեաներուն կը վերաբերէր, ծանօթ
է արդէն, սակայն արձանագրապէս նախ
հոս կը հաստատուի¹:

Հոս յիշուած տիտղոսները կը նմանին
աննաց, զորս կը կըէին ամէն աթարէկ
և ուրիշ աւատական իշխանց, որք կը
գտնուէին Անդուգեան Սուլդանաց—որ են
Արասեան կամ Ֆաթիմեան Խալիֆայը—
զերիշխանութեան տակ:

Դ. Ամրու

9. Արձանագիր Օրտոքիտեան Մալիք
Մալիք Մահմուտի. յամին 605 (1209):—
Ամրու պարիսպները արաբական արձանա-
գրութեանց թանգարան մ'են: Հետեւալլ
աննաց մէջն «Եէտի Գարտաշ» կոչուած
աշտարակինն է, որ շրջապարսպին հա-
րաւ արեմոտակողմը կը գտնուի:

«Ասիկայ է ինչ որ հրամայեց շինել
մեր տէրը Սուլդան ալ-Մալիք Մալիք,
իմաստուն, արզար, սրբազն կու մզող,
յառաջադէտ, սահմանապահ, կինդանա-
ցուցիչ արգարութեան, Նասր ալ-տունին
վալ-տին, նետածիզ իշխանի և մուալիմի,
գերազանցութիւն տէրութեան, պարծանք
թագաւորաց և Սուլդանաց, թագաւոր Է-
միրաց, Սուլդան Տիշեար-Պաքրի, Փոքր Ա-
սիոյ և Հայաստանի, ամրողութիւն մե-
ծագրոծութեանց, դիւցազն աշխարհի,
Խուսրաւ իրանու, Նախարար, քաջ պա-
տերազմող (?), երջանիկ իշխան Ապու-
լ-Փաթէ Մահմուտ, որդի Մուհամմատայ,
որդույ Գարա Արսլանի, որդույ Տաւուտի,
որդույ Սուրմանայ, որդույ Ռորդուքայ,

1. Խարբերդ մինչև 518 (1122) կը վերաբերէր Պա-
ւար իսկ Պահրամի, որ օրենքայր մ'էր Գարա Արսլա-
նի հօր Տաւուտի, Ըստ Ապու լ-Փարամի զայն գրաւեց
յայնած Պահրամ ազգաբար Ասուլյան անուամբ մէկը,
որ սակայն հաւատական անյին տարսաւ մէջ մե-
ռաւ, (առև Լանգ-Պուլ, Ուրտի և 6 Num. Chroni-
cole 1873, 12 և ատիսակը). Ասկէ անմիջապէս յետոյ
բազարը ինկած կը աննուուր Քայֆայի Օրտոքիտեանց
ծեռք. վասնիկ Տաւուտ արդէն զայն գրաւած էր, յետոյ

Գարա Արսլան տիրեց, յետոյ իւր որդին Մուհամմատ,
իսկ յետոյ սորա եղբայրը Խմատ ալ-թին Ապու Պաքր
ըստ 581ին (1185) Փոքր հարստաթիւն մը վիմեց, (առեւ
իսկ Աթիր և Ապու լ-Փիտա ի Hist. or. des Crois.
15, 344, 352 և այլն) Ասուլյան Ասուլյանէր, 852-5
ապ. Եպ. 1898-Ապու լ-Փարամ, թագրի. Պարուն,
809, 332, 336, 343, 359, 400, և այլն. Խարբերդի
մէջ յաջորդող իշխաններու մասին ենթագրական խու-
զարկութեանը կը շարունակի դեռ:

օղնական հաւատացելոց իշխանին, թող հզօր ըլլայ իւր յաղթութիւնը։ Երնեց Եահանա (կամ Յովհաննէս), որդի իպրահիմի, քերական(?)։ Մուլիք Սալիի համար»։

Մահմուտ 597ին (1201) յաջորդեց իւր հօր Մուհամմատի, պատերազմեցաւ Խարբերդի մէջ իւր հօրեղօր գէմ, ֆարբինի մէջ Մուսայի գէմ, Մուսուլի մէջ Լուլուի գէմ։ Ինքն ճանչցաւ Ատիլ և Քամիլ Այուղեաններու և Ալեճուգեան Քայյեավուս Ալի. գերիշխանութիւնը և մեռաւ 619ին (1220), վատահամբաւուած իրը փիլիսոփայ և հերետիկու, այսինքն անձկամբտ մուսլիմ մը չէր, ինչպէս իւր ժամանակի շատ մը իշխանները։

Ինքը կը կրէ Սուլդան տիտղոսը որ րուն աւատառու թագաւորին յատուկ էր. սակայն այդ ժամանակ սոյն տիտղոսը կորանցուցած էր իւր նախիլն նշանակութիւնը և ամէն երկրորդական իշխաններն ալ զայն կը կրէին։

Գ. Բաբերը

10. Արձանագիր Ալեճուգեան Մալիք Մուազզամ Տուղրիլ, յամին 610 (1214). — Քաղաքի բերդին հարաւային պարապին վրայ կայ հետեւեալ արձանագրութիւնը.

«Այս օրհնեալ և երջանկարեր շինութիւնն կատարուեցաւ Մալիք Մուազզամի իշխանութիւնն ժամանակ, իմաստուն, արդար, որուն ալլահ օգնած է, յաղթող, պատերազմող, յառաջադէմ, Մուզիթ ալտուննեա ալ-աթին, հզօրացուցիչ իւլամի և մուսլիմի, տէր թագաւորաց և Սուլդանաց, կատարեալ Ալեճուգեանց մէջ, թագաւոր Փոքր Ասիոյ և Հայոց, Ապու Հարիթ Տուղրիլ, որդի Գրլեճ-Ալբալանի, որդոյ Մասուտայ, որդոյ Գրլեճ-Ալբալանի, *որդոյ Սուլեյմանայ, օգնական իշխանին հաւատացելոց։

(Եւ այս կատարուեցաւ) ի ձեռն անպիտան ծառայի և ալլահի շնորհաց կարօտ Լուլուի, որ է մերձաւոր Մալիք (Մուազզամ) Մուրիթի, յամին 610 և 15 մասի երկրորդի (Յ Սեպտ. 1213)։

Այս իշխանը, թէև ձեռագիրներէն և դրամներէն ծանօթ է, արձանագրապէս առաջին անգամ հոս կը ծանօթանայ։

Երբ Սելճուկեան Սուլդանը Գրլեճ Ալբան Բ իւր մահուանէն առաջ յամին 588 (1192) իւր տէրութիւնը իր տասուերկու որդուց մէջ բանեց, Տուղրիլին ինկաւ կապարովիկոյ Ապուլուսայն երկիրը։ Յամին 597 (1201) իւր եղբայրը Սուլդան Սուլէյման Բ փոխաղբեց զինցը կը զերում, ուր գահազուրկ եղած էր վերջին Ալեճուգեանը։ Երբ ինքը իրը 622ին (1223) մեռաւ, որդին ձահան շահ յաջորդեց իւրն, և ասոր մահուամբ 627ին (1228) վերջացաւ Էրզերումի Ալեճուգեան փոքրիկ հարստութիւնը։ Կարծեմ թէ առաջին անգամ այս արձանագրութեամբ կը տեղեկանանց թէ Բարերդը Տուղրիլ գրաւած է։ Տուղրիլ սոսկ Մալիք տիտղոսը կը կրէ, իրը աւատական իշխան նոյն ժամանակուան Սուլդան Քայյեավուս Ալի, թէև մը վերջ Սուլդան անունը սովորական եղաւ։

11. Արձանագրութիւն մը միւնոյն անձին - Հարաւային պարսպի մէկ ծայրին մէջ մուծուած են երկու արձանաբարեր։

«Ակիզբն և շինութիւն այս օրհնեալ բերդին (տեղի ունեցան) ի ժամանակս Թագաւորի, իմաստոնյ, արդարի, ալլահէն օգնութիւն գտնողի, յաղթողի, պատերազմողի, յառաջադէմ, Մուզիթ ալ-տուննեա վալ-աթին, իւլամի և մուսլիմի հզօրացնողի, անհաւատից և բազմաստուածեաններու նուռանողի, թագաւորին Փոքր Ասիոյ և Հայաստանի, Ապու Հարիթ Տուղրիլի, որդոյ Գրլեճ Ալբալանի, որդոյ Մասուտայի, որդոյ Գրլեճ-Ալբալանի, օգնական իշխանին հաւատացելոց։ Այս շնչը շինուն է Լուլու հազարապէտ, ծառայ անպիտան, ազգական Մալիք (Մուազզամ) Մուրիթի»։

Թրգմ. Հ. Յ. Աստուրեան